ԽԱՉԱՏՈՒՐ ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆԻ ԴԻՄԱՔԱՆԴԱԿԱՅԻՆ ԱՐՁԱՆԻԿՆԵՐԸ

ՆԱԴԱՐՅԱՆ Ն. Թ.

Խաչատուր Իսկանդարյանի արվեստը ձևավորվել է 1950-ական թվականներին: Նա առաջին իսկ քայլերից հանրությանը ներկայացավ իբրև սուր դիտողականությամբ օժտված արվեստագետ, որին մոտ են ինքնատիպ, թարմ կոմպոզիցիոն լուծումով հատկանշվող կամերային փոքր ձևերը: «Իմ լավագույն ընկերն ու բարեկամը՝ անվանի քանդակագործ Նիկողոս Նիկողոսյանը, Երևանում ցուցադրել էր իր մի քանի մանրաքանդակները, որոնք չափազանց դուր եկան ինձ, և ես սկսեցի զբաղվել մանրաքանդակներով[1]», - ասում էր Իսկանդարյանը:

Խ. Իսկանդարյանն առաջիններից մեկն է այն քանդակագործներից, որոնք սկսեցին հայ կերպարվեստում զարգացնել մանր պլաստիկան: Վերջինս հեղինակին հնարավորություն է տալիս իր մտքերը, հույզերը գեղագիտական ճաշակն ու նախասիրությունները, սեփական, հեղինակային կարծիքը, ստեղծագործական յուրահատուկ ձեռագիրը լիարժեքորեն արտահայտելու համար:

Իսկանդարյանի թողած գեղարվեստական ժառանգության մեջ հատուկ նշանակություն ունեն դիմաքանդակային արձանիկները: Չբավարարվելով պատկերված դիմաքանդակային արձանիկների միայն արտաքին նկարագրությամբ՝ Իսկանդարյանը կիրառել է գեղարվեստական այնպիսի միջոցներ, արտահայտչական այնպիսի հնարներ, որոնք համոզիչ կերպով բացահայտել են կերպարների ինչպես արտաքին, այնպես էլ ներքին նկարագրերը: Նա իր ուշադրությունը կենտրոնացրել է բնորդների դեմքերի արտահայտությանը, նրանց խոսուն հայացքին, բնութագրական շարժուձևերին, հոգեբանական խառնվածքներին… Արվեստագետին հատկապես հրապուրել են գաղափարական հաստատուն նկարագրեր ունեցող, ստեղծագործական աշխույժ կյանքով ապրող մարդկանց կերպարներ («Վիլյամ Սարոյան», «Գաբրիել Գյուրջյան», «Նիկողոս Նիկողոսյան», «Դերենիկ Դեմիրճյան», «Մուրադ Կոստանյան», «Լիդիա Դուռնովո», «Գրիգոր Մեղնիկյան», «Ռաֆայել Շիշմանյան», «Հովհաննես Բաղրամյան», «Մարտիրոս Սարյան», «Բարդուղ Վարդանյան», «Նեմրութ Բաղդասարյան» և այլն): Իր դիմաքանդակային արձանիկներում Իսկանդարյանը թափանցում է բնորդի հոգեբանության մեջ, վեր է հանում տվյալ անհատի բնորոշ գծերը, առանձնացնում է էականը՝ բնորդին հմտորեն պատկերելով խորհելիս, աշխատելիս… Այդպիսի տպավորություն է թողնում քանդակագործի «Վիլյամ Սարոյան» (1971) դիմաքանդակային արձանիկը: Չափերով փոքր (31x10x7) այս բրոնզե արձանիկը գտնվում է վարպետի արվեստանոցում: Իսկանդարյանն իր այս հերոսին նկարագրելիս հիշում

---

[1] **Փիլոսյան Ս.,** *Խաչատուր Իսկանդարյան (Համայնապատկեր, 22.I.2003):*

էր. «Վիլյամ Սարոյանն իմ մտապատկերներում հառել է որպես մի հաստաբուն կաղնի՝ հզոր, խորախորհուրդ»[2]: Այդպիսին էր Սարոյանին տեսել Իսկանդարյանը, երբ քանդակում էր գրողի կերպարը: Բայց մինչև քանդակի ստեղծումը Սարոյանը եղել է Գյումրիում, այցելել է Իսահակյանի տուն-թանգարան և, տպավորված արվեստագետի՝ Ավետիք Իսահակյանի հուշարձանով[3], թանգարանի հուշագրքում թողել է հետևյալ տողերը. «Ես մի օր պետք է մահանամ: Կուզեի թաղվել այստեղ, այս բակում, Ավետիք Իսահակյանի հուշարձանի հայացքի տակ»[4]: Վ. Սարոյանի դիմաքանդակային արձանիկը բնականի անտարբեր ընդօրինակումը չէ. աշխատանքը մշակումով անկաշկանդ է և անմիջական հայեցողությամբ ընկալված: Մի կողմ թողնելով գրողի հասարակական դիրքը՝ տեսնում ենք Իսկանդարյանի ստեղծած կերպարը՝ ինքնավստահ, համարձակ և խոհուն: Գլխի ուղիղ դիրքը, ձեռքերը գրպանում կեցվածքը նկատելի են դարձնում այդ հատկությունները: Կերպարում առկա է խորամիտ մտավորականի, հայրենասեր գրողի, մտածողի էությունը: Քիչ բան չեն ասում նրա խոհուն, կենտրոնացած, սևեռուն հայացքը, որը ոչ թե ուշադիր դիտողին է նայում, այլ հառած է հեռուն: Սարոյանի կերպարում Իսկանդարյանը խտացրել է հաստատակամ, կյանքի փորձով իմաստացած մարդու հատկությունները:

Այս շարքի դիմաքանդակային արձանիկների մեջ իրենց ուրույն տեղն ունեն ՀԽՍՀ ժողովրդական նկարիչ Գաբրիել Գյուրջյանին պատկերող երեք բրոնզե քանդակները, որոնցից առաջին երկուսը ստեղծվել են 1977-ին, իսկ երրորդը՝ 1978-ին: Կարծում ենք՝ 1977-ին ստեղծված քանդակներից մեկը, որտեղ Գյուրջյանը ներկայացված է թիկնակով աթոռին նստած, առանց թիկնակի նստարանին նստած աշխատանքի նախաքանդակն է. քանդակը թողնված է էտյուդային վիճակում: Թեև երկրորդ աշխատանքը ներկայացված է համեմատաբար ավարտուն, մշակված տարբերակով, սակայն երկուսում էլ Իսկանդարյանը ավելի շատ ուշադրություն է դարձրել ձևին, քան բովանդակությանը: Գյուրջյանը, բնականից ունենալով մի փոքր գիրություն, աշխատանքներում ներկայացված է ծավալային, զանգվածային մշակումներով. կերպարներն ունեն բնական կեցվածքներ և հոգեբանական ինքնամփոփ նկարագրեր: Այս երկու դիմաքանդակային արձանիկների արժանիքներից մեկն այն է, որ կատարված են անմիջական ընկալումով՝ առանց կանխամտածված ձևերի: Երրորդ աշխատանքում Գյուրջյանը ներկայացված է ամբիոնի մոտ կանգնած՝ թղթապանակը ձեռքին (ի դեպ, վերոնշյալ երկու քանդակում ևս առկա է թղթապանակը): Իսկանդարյանը վարպետորեն է ներկայացրել

[2] **Փիլոսյան Ս.,** *Խաչատուր Իսկանդարյան, Կատալոգ, Ե., 2010, էջ 11:*

[3] *1974 թ. Խ. Իսկանդարյանը մասնակցում է Ավ. Իսահակյանի հուշարձանի մրցույթին և արժանանում խրախուսական մրցանակի, իսկ արդեն 1975 թ. իրականացնում է իր մտահղացումը:*

[4] **Փիլոսյան Ս.,** *նշվ. աշխ., էջ 12:*



Վիլյամ Սարոյան Գաբրիել Գյուրջյան Նիկողոս Նիկողոսյանի

Դերենիկ Դեմիրճյան Մուրադ Կոստանյան Լիդիա Դուռնովո

Գյուրջյանի և՛ դեմքը, և՛ կեցվածքը՝ ձգված, զգաստ, ամբիոնի բարձրությունից շատ քիչ տարբերվող հասակ, դեպի վեր ուղղված հայացքին ենթարկված գլուխ, խոսելու պատրաստ շրթունքներ: Քանդակագործը լավ գիտեր Գաբրիել Գյուրջյան մարդուն և գեղանկարչին. նա Իսկանդարյանի գունանկարչության ուսուցիչն էր: Արվեստագետին հաջողվել է կոմպոզիցիոն զուսպ ձևերի օգնությամբ ցույց տալ Գյուրջյանի՝ գործելու

էներգիայով լի աշխույժ խառնվածքը և ինքնուրույնությունը: Աշխատանքում նկատում ենք, որ Իսկանդարյանը փորձում է հասնել ընդհանրացումների ոչ մանրակրկիտ մշակված ֆակտուրայի շնորհիվ: Խ. Իսկանդարյանի թոռը՝ Խաչատուրը, որը հիանալի կերպով հիշում է պապիկի ստեղծած քանդակների պատմությունները, մեզ հետ զրույցում հաղորդեց, որ Գյուրջյանը, տեսնելով իր արձանիկը, թեև հավանել է, սակայն հումորով նշել է, որ կարելի էր մի փոքր իրականությունից շեղվել և իրեն ավելի բարձրահասակ ներկայացնել:

Մեծ թիվ են կազմում Իսկանդարյանի ընկերոջ՝ քանդակագործ, ՀԽՍՀ ժողովրդական նկարիչ Նիկողոս Նիկողոսյանի (նրանց բարեկամությունն սկսվել է դեռ 1933 թ.) կերպարները: Մոտիկից ճանաչելով քանդակագործին, քաջատեղյակ լինելով նրա գործունեությանը՝ վարպետն իր աշխատանքներում կարողացել է Նիկողոսյան ընկերոջը և արվեստագետին ներկայացնել անկեղծ, մտերմիկ ու անմիջական: 1976 թ. ստեղծված գրեթե միանման երկու բրոնզե դիմաքանդակային արձանիկներում բազմոցի մեջ ընկղմված Նիկողոսյանի կերպարներին Իսկանդարյանը խոհական արտահայտություն է հաղորդել: Այստեղ քանդակագործի կերպարների դիմագծերը կերտելու անկաշկանդ եղանակները հասնում են այնպիսի վարպետության, ինչպիսին ունեն ստեղծագործական վառ անհատականությամբ օժտված արվեստագետները: Լավ ճանաչելով Նիկողոսյան մարդուն՝ Իսկանդարյանը կարողացել է օբեկտիվորեն կերպավորել նրան. քանդակագործը խուսափել է սուբյեկտիվ գնահատականներից, վստահել սեփական աչքին ու ղեկավարվել ստեղծագործական սթափ գիտակցությամբ: Իսկ սա նշանակում է, որ քանդակագործը իր ստեղծած կերպարներում չի կիրառել ակադեմիական քարացած, մամռոտած ձևեր: Քանդակներում կերպարները մշակված են այնպիսի անկաշկանդ ձևերով, ինչպիսին տեղի է ունենում հանպատրաստից աշխատելիս, ստեղծագործական ներշնչման պահին: Աշխատանքները արտահայտիչ են՝ որպես հաստատակամ, խառնվածքով արվեստագետի կերպարներ:

Իսկանդարյանի դիմաքանդակային արձանիկներում մշտապես կարևորվել է մարդն իբրև մտածող անհատականություն: Նա կարողացել է յուրաքանչյուր աշխատանքում ներկայացնել պատկերվող անձի և՛ բնավորությունը, և՛ արտաքին տեսքը: Այդ ամենն արել է ֆակտուրայի անթերի մատուցման շնորհիվ: Վերը նշված խոսքերի հաստատումն է Դերենիկ Դեմիրճյանի (1985) դիմաքանդակային արձանիկը, որն ունի ուշագրավ պատմություն: Այսպես, 1977 թ. մայիսի 19-ին Երևանի քաղխորհրդի նախագահ Մուրադ Մուրադյանի հրամանով անվանի գրող Դ. Դեմիրճյանի ծննդյան 100-ամյակի տոնակատարությունների շրջանակում Երևանի Օղակաձև զբոսայգում մեծ հանդիսավորությամբ հիմնադրվում է հուշաքար՝ ապագայում այստեղ կառուցվելիք հուշարձանի մասին: 1982 թ. հայտարարվում է հուշարձանի մրցույթը, որն ընթանում է երկու փուլով: Մրցույթին մասնակցում է Իսկանդարյանը և արժանանում առաջին կարգի մրցանակի: 1985-ին արձանի 2.5մ բարձրությամբ գիպսե տարբերակն արդեն պատրաստ էր: Փոխվեց հասարակարգը, փոխվեցին իշխանությունները, սակայն Դեմիրճյանի գիպսե արձանը

քանդակագործի արվեստանոցից դեռ «ոտքը դուրս չի դրել»[5]: Այս նպատակով Իսկանդարյանը գրողի 125-ամյակին նիրված երեկոյին Հակոբ Պարոնյանի անվան կոմեդիայի թատրոնի ճեմասրահում ներկայացրեց արձանի բրոնզաձույլ, նախօրինակից որոշ չափով զանազանվող տարբերակ՝ հովանավոր գտնելու հույսով: Վերջինիս մոնումենտալ տարբերակն իր արժանի տեղն է փնտրում մինչև օրս, իսկ փոքրաչափ տարբերակը այժմ Դերենիկ Դեմիրճյանի տուն-թանգարնում է: Մանրաքանդակում Դեմիրճյանը կերպավորված է դեմքի խոհուն, ներամփոփ արտահայտությամբ, ողջ հասակով մեկ կանգնած, մի փոքր գլխահակ, աչքերը խոնարհած, աջ ձեռքով հենված իր նշանավոր ձեռնափայտին, իսկ ձախով՝ գլխարկը բռնած: Տեսնում ենք հավասարակշռված, զգացմունքային խառնվածքով, հաստատակամ, խելամիտ գրողի: Աշխատանքում Իսկանդարյանը ուշադրություն է դարձրել բնորդի դեմքի մշակմանը, կեցվածքին, զգեստներին, որոնք նպաստել են կերպարի արտահայտիչ նկարագրմանը: Դեմիրճյանին պատկերող այս քանդակում ճակատի վրա ակոսված խոր կնճիռները, խոնարհված հայացքը կարծես պատմում են գրողի ողջ կյանքի մասին:

Իսկանդարյանի՝ մեզ հայտնի դիմաքանդակային արձանիկներում արտաքին նկարագրի արահայտչականությամբ իր ուրույն տեղն ունի ՀԽՍՀ ժողովրդական արտիստ «Մուրադ Կոստանյան» մանրաքանդակը (1982, բրոնզ): Անշուշտ, այս դեպքում նշանակալի դեր են կատարել դերասանի դիմագծերի պատրաստի տվյալÉները. լայն ճակատ, դեմքի վրա իշխող քիթ, ճակատին, աչքերի տակ ծերունական խորշոմներ, հետ սանրած մազեր: Կոստանյանը ներկայացված է գլուխը վեր, ձեռքերը հետևում խաչված, հպարտ կեցվածքով և ինքնավստահ արտահայտությամբ: Եվ եթե աշխատանքում դիտվում է կեցվածքի որոշ հանդիսավորություն, դա ոչ թե Իսկանդարյանի միտումի արդյունքն է, այլ ֆիգուրի բնական հատկանիշը: Քանդակագործի ստեղծած դիմաքանդակային արձանիկը ներշնչում է իմպրեսիոնիստական հուզականություն. սրա համար անհրաժեշտ էր ունենալ սուր դիտողականություն, մարդու ներաշխարհը թափանցելու հատկություն, բնորոշն ընդգծելու ունակություն: Աշխատանքում արտիստը ներկայանում է որպես կյանքից ու իր կերտած դերերից «դասեր առած» անձնավորություն: Իսկանդարյանը ստեղծել է ոչ միայն Կոստանյանի դիմաքանդակային արձանիկը, այլև նրա դիմաքանդակը[6]. ի դեպ, երկու աշխատանքներն էլ ինչ-որ չափով նման են Իսկանդարյանի կերպարին: Ի տարբերություն Կոստանյանի քանդակի դինամիկ կոմպոզիցիայի, որը թելադրված էր նրա արտիստական նկարագրով, Վարվառայի քանդակում («Հուշեր անցյալից», 1985, բրոնզ) ուշադրությունը կենտրոնացված է կնոջ ինքնամփոփ ներաշխարհի բացահայտմանը: Եթե

---

[5] *Տե՛ս* **Խանջյան Ա.,** *Դերենիկ Դեմիրճյանի արձանը սպասում է հանգանակության, Գրական թերթ, 13.VI.2003:*

[6] *Տե՛ս* **Նադարյան Ն.,** *Խաչատուր Իսկանդարյանի դիմաքանդակները (Կանթեղ. Գիտական հոդվածներ, 2015, - 2 (63), էջ 216):*

ճանաչված մարդկանց պատկերելիս Իսկանդարյանը փորձում է գտնել և ներկայացնել մարդու հոգեկան կերտվածքը, որ արտահայտվում է նրա զգացմունքայնությամբ, եռանդով, գործունեությամբ, ապա մեզ անծանոթ բնորդների պա-բագայում այնքան նրբազգաց է կառուցում կոմպոզիցիան, որ նրանց «մարդկային տեսակին» առնչվող դիտողն ինքն է ակամա մտորում, վերլուծում, կերպարներին վերագրում, ենթադրում հատկանիշներ: Աշխատանքում ներկայացված ծեր կինն ունի համեստ զգեստավորում: Վարվառան կերպավորված չէ զարդերով, ամեն ինչ զուսպ է և ենթարկված ծեր կնոջ էությունը բացահայտելու խնդրին: Նրա հանգիստ կեցվածքը, մասամբ երազկոտ, մտորումների մեջ խորասուզված ֆիգուրը զերծ է որևէ խստությունից, իսկ բնավորության փափկությունն ու խորությունը հմայում են դիտողին: Իսկանդարյանի ստեղծած ծեր կնոջ կնճռապատ դեմքին նկատվում է բարություն: Այդ մտորումներից առաջացած նրա լռությունն իրենց արտացոլումն են ստացել կնոջ հոգնած աչքերում և գլուխը ձեռքին հենած դիրքում, որոնց նաև «ձայնակցում են» սեղմված շրթունքները: Իսկանդարյանը այստեղ ժեստի և դիմախաղի նկատմամբ ցուցաբերել է ավելի մեծ ուշադրություն: Նման ժեստերը և դիմագծային արտահայտչականությունը գրեթե վճռական են դարձնում կերպարը կառուցելիս:

Հոգեբանական խոր և կենսագրական սեղմ նկարագրով է աչքի ընկնում հատկապես «Լիդիա Դուռնովո» մանրաքանդակը (2006, գիպս), որը Հայաստանի ազգային պատկերասրահում է: Լիդիա Դուռնովոն մեծ աշխատանք է ծավալել միջնադարյան Հայաստանի որմնանկարչական, մանրանկարչական, կիրառական արվեստի գիտական նմանահանության և ուսումնասիրության ասպարեզում: Իսկանդարյանը Լիդիա Դուռնովոյին քանդակել է նստած, որոշ չափով մտազբաղ: Կերպարի զուսպ զգեստն ընդգծում, շեշտում է Դուռնովոյի նուրբ պարանոցը: Այստեղ քանդակագործը կարողացել է ներկայացնել բնահատուկ վեհությունը մի մարդու, որ իր ամբողջ էությամբ կապված է եղել կյանքի, հայ ժողովրդի հետ, որոնք նրան կենսական և ստեղծագործական ուժեր են հաղորդել: Կերպարի կենսունակության գրավականը իրականությանը հարազատ մնալու, դիմագծերի բնական ձևերը պլաստիկ ճշմարտացիությամբ մարմնավորելու մեջ է: Սուր դիտողականությամբ է ընկալված նրա հոգեվիճակը. Իսկանդարյանը թափանցել է մինչև հոգու խորքը՝ ներկայացնելով նրան բարի, վայելուչ, կենսունակ: Դուռնովոյի դիմագծերի նրբությունը, խաղաղ դեմքը կերպարին տալիս են ջերմություն՝ մարդուն հաղորդակից դարձնելով նրա մտերիմ խոհերին:

Դիմաքանդակային արձանիկներում նախապատվությունը տալով անհատներին՝ Իսկանդարյանը վեր է հանել մարդու յուրօրինակությունը և եզակիությունը: Դեմքերը նմանողությամբ դիպուկ են, անհատականությամբ՝ որոշակի, մշակումներով՝ արտահայտիչ: Քանդակագործն իր ստեղծած կերպարներից յուրաքանչյուրը ներկայացրել է ինքնատիպ ներաշխարհով, որոշակի արտահայտությամբ, տրամադրությամբ, ապրումներով, պլաստիկ կենդանի ձևերով: Նրան հատուկ է բնորդի հոգևոր աշխարհը նրբորեն զննելու,

թեման ուսումնասիրելու և մարմնավորելու կարողությունը: Իսկանդարյանի համար կերպարին մարմնացում տալը նախ և առաջ կերպարների բնավորությունները մեկնաբանելն է՝ գտնել կերպարների զգացմունքների այն առանձնահատուկ հյուսվածքը, որով կերտած աշխատանքը կարող է ապրել:

ПОРТРЕТНЫЕ СТАТУЭТКИ ХАЧАТУРА ИСКАНДАРЯНА

НАДАРЯН Н. Т.

Резюме

Отдельную группу в творчестве ваятеля представляют портретные статуэтки. В этих работах скульптор с любовью и мастерством изобразил своих современников, друзей, известных деятелей искусства (Н. Никогосян, Г. Гюрджян, Д. Демирчян, Б. Вартанян, А. Карибян, Р. Шишманян, М. Костанян, М. Сарьян и др.), найдя для каждого портрета особое решение и продемонстрировав при этом высокий профессиональный уровень мастерства и тонкий вкус.

PORTRAIT STATUES OF KHACHATUR ISKANDARYAN

N. NADARYAN

Abstract

A separate group in the works of the sculptor are portrait statues. With love and skill the sculptor presented his contemporaries, friends and well-known artists (N. Nikoghosyan, G. Gyurjyan, D. Demirchyan, B. Vartanian, A. Gharibyan, R. Shishmanyan, M. Kostanyan, M. Saryanand others) finding for each portrait a singular solution and demonstrating highest level of professional skill and good taste.